ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/163

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2018թ. թիվ 26-3/20194-18 գրությամբ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04226514) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.11.2018թ. թիվ 02/01.91/7917 գրության հիման վրա, 15.10.2018թ. նախաձեռնել է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ մշակույթի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ մշակույթի նախարարությունը 03.11.2018թ. թիվ 02/01.91/7917 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքների և խճանկարների ամրակայման (թանգարանացման) և մասնակի վերականգնման 2018թ. նախատեսվող աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.02.2018թ. հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊ ընկերության միջև (այսուհետ՝ կապալառու) 2018 թվականի մարտի 19-ին կնքվել էր պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

Պայմանագրի 1.3-րդ կետի և N 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր 01.11.2018թ.:

ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 31-ին պայմանագիրը միակողմանի լուծվել է պայմանագրի 3.1.4-րդ կետի ա) ենթակետի հիմքով:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով պայմանագրի 8.9-րդ կետը՝ կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2018 թվականի հոկտեմբերի 31-ին հրապարակվել է տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի հիմքով «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով՝ կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արսեն Սողոմոնյանը և Արմեն Աբրոյանը:

3. «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2018թ. թիվ 26-3/20194-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Սուրեն Բաղդասարյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/163 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20194 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ մշակույթի նախարարությունը 03.11.2018թ. թիվ 02/01.91/7917 գրությունը, ՀՀ մշակույթի նախարարության և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված՝ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով պայմանագիրը.

ՀՀ մշակույթի նախարարության և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքվել է պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքների և խճանկարների ամրակայման (թանգարանացման) և մասնակի վերականգնման 2018թ. նախատեսվող աշխատանքները, (այսուհետ՝ աշխատանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել աշխատանքը և վարձատրել դրա համար:

• 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01.11.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N2):

• 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

• 4.1 կետի համաձայն՝ կատարված աշխատանքն ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4):

• 5.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 8.9 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ

մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը՝ Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել են ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքների և խճանկարների ամրակայման (թանգարանացման) և մասնակի վերականգնման 2018թ. նախատեսվող աշխատանքները՝ ներառյալ վերականգնողական աշխատանքները, և հանված և վերականգնված խճանկարե հատակի ցուցադրման տարածքի կազմակերպումը թանգարանում:

Ըստ Պայմանագրով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվի՝ աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01.11.2018թ.:

Պատվիրատուն 03.09.2018թ. թիվ 03/14/5918-18 գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ վերջինիս և ՀՀ մշակույթի նախարարության միջև 2018 թ. մարտի 19-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով պայմանագրով 03.09.2018թ. դրությամ որևէ աշխատանք Հայաստանի պատմության թանգարանում չի իրականացվել, իսկ սահմանամերձ տարածք մուտք գործելու համար (բաղնիքների ամրակայման աշխատանքների մասով) Ընկերության կողմից չեն ներկայացվել աշխատակիցների անձնագրային տվյալները: Պատվիրատուն նախազգուշացրել է Ընկերությանը, որ առաջիկայում սեղմ ժամկետներում աշխատանքները չսկսելու դեպքում ՀՀ մշակույթի նախարարության կողմից Պայմանագիրը միակողմանի կլուծվի:

31.10.2018թ. թիվ 02/14/7806-18 գրությամբ Պատվիրատուն կրկին դիմել է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին և տեղեկացրել վերջինիս, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի պահանջը՝ 31.10.2018թ. ՀՀ մշակույթի նախարարությունը միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը՝ 31.10.2018թ. Պատվիրատուն հրապարակել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն և ՀՀ մշակույթի նախարարության միջև 19.03.2018թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19»

ծածկագրով պայմանագիրը, սակայն պայմանագրով՝ սահմանված ժամկետում «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

- armeps համակարգի միջոցով Պատվիրատուի և Կապալառուի միջև կատարված աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող որևէ փաստաթուղթ (հանձնման-ընդունման արձանագրություն) չի ստորագրվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն 19.03.2018թ. կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» պայմանագրով նախատեսված աշխատանքները չկատարելով՝ խախտել է նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2018թ. թիվ 26-3/20194-18 գրությամբ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04226514) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ